ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/15» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ք. Երևան

11.11.2019թ.
Ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա.Նազարյանը,
գնահատողներ՝
- ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ.Վահանյանը,
- ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ.Անտոնյանը,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍԱ բաժնի գլխավոր մասնագետ Հ.Ավետիսյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/15» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ.Ամիրյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած Մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/15» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած Մասնակիցների մասին.
(Մ.Ամիրյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/15» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Կուրացիո» ՍՊԸ
2	«ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ
3	«ՄԻ ՎՆԱՍԻՐ» ՍՊԸ
4	«Նաիրի Ալանիկա» ՍՊԸ
5	«Դիանա Մինասյան» Ա/Ձ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Մ.Ամիրյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին)՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.
«Դիանա Միանասյան» Ա/Ձ-ի, կողմից ընթացակարգի հրավերի N 1 հավելվածով ներկայացված մասնակցի իրական շահառուների մասին տվյալների աղյուսակի՝ 1-ին սյունակում չի նշվել իրական շահառու հանդիսացող անձի **Հայրանունը**:
Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետև՝ Կարգ/ 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ

աշխատանքային օրով կասեցրեց նիստը և գնումների համակարգողը 14.11.2019թ. ծանուցեց մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը /15.11.2019թ./ շտկել վերը նշված անհամապատասխանությունը:
«Դիանա Միանասյան» Ա/Ձ-ն սահմանված ժամկետում ուղարկել է պահանջվող փաստաթուղթը: Ուղարկված փաստաթղթում որպես տեքստային հատված տեսանելի է էլեկտրոնային ստորագրության բովանդակությունը, սակայն էլեկտրոնային ֆայլը հաստատված չէ մասնակցի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, քանի որ էլեկտրոնային ֆայլի վրա բացակայում է էլեկտրոնային ստորագրության վահանակը/signature panel/՝ որը հնարավորություն է տալիս ստուգել PDF ֆորմատով ֆայլի էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը /**www.ekeng.am**/:

Համաձայն Կարգի 32-րդ կետի 12 րդ ենթակետի գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Կարգի 42-րդ կետի համաձայն, եթե Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետև՝ Օրենք/ 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության՝ բացառությամբ Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝
ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Համաձայն Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Կարգի 45-րդ կետի համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

18.11.2019թ. Հաշվի առնելով վերոնշյալը և հիմք ընդունելով Կարգի 32-րդ, 42-րդ և 45-րդ կետերի և Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջները «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց «Դիանա Մինասյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը մերժել և «Դիանա Մինասյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով մասնակցի տվյալները ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

-«Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից սույն ընթացակարգի 54-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկում աղյուսակի արժեքը/ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը/ սյունակում լրացվել է 425000/չորս հարյուր քսանհինգ հազար/, ԱԱՀ սյունակում՝ 20/քսան/, ընդհանուր գինը սյունակում՝ 510000/հինգ հարյուր տաս հազար/:

Համաձայն Կարգի 32 րդ կետի 2) ենթակետի մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Սակայն «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գնի սյունակում նշված գումարը չի համապատասխանում աղյուսակի արժեքի/ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը/ և ԱԱՀ-ի սյունակում լրացված գումարների հանրագումարին:

Հիմք ընդունելով Կարգի 40 րդ կետի 4) ենթակետի պահանջները /հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան/ գնահատող հանձնաժողովը որոշեց «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի 54 րդ չափաբաժնով ներկայացված հայտը մերժել:

Միաժամանակ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և սույն ընթացակարգի հրավերի 7.6 և 7.7 կետերի պահանջները, որոշեց հրավերի պահանջներին բավարար գնահատված մյուս մասնակիցների հետ 22.11.2019թ. ժամը 14:30-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (**ք. Երևան, Բագրևանդի 5**) կազմակերպել միաժամանակյա բանակցություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.
(Մ.Ամիրյան)

3.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/15» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել **22.11.2019թ.** ժամը 14:30-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)		Ա.Նազարյան
Գնահատող		Վ.Վահանյան
Գնահատող		Գ.Անտոնյան
Գնահատող		Հ.Ավետիսյան
Գնումները համակարգող		Մ.Ամիրյան